ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Համայնքի ավագանու 2019 թ. թիվ 36 որոշման մեջ լրացում կատարելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

2. Եղեգնավան համայնքի 2021 թ. տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

3. Համայնքի 2020 թ. III եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

4. Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Հ' Ղազարյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ԹԻՎ 36 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 40-րդ հոդվածներով, <<Պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Համայնքի ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 17-ի «Համայնքապետարանի 2020 թ-ի աշխատտողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 36 որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը՝

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180000

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29-Ն

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Սահմանել Եղեգնավան համայնքի 2021 թ-ի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է 4 էջ/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Եղեգնավան համայնքի
Ավագանու 04.11.2020 թ-ի թիվ 29-Ն որոշման

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4 500 դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9 000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1 500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 1500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20 000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 500 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ.

բ. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 500 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ.

6) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար 180 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

7) համայնքի վարչական տարածքում առևտրին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25 000 դրամ,

8) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 750 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ 190 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 80 դրամ.

9) համայնքի անվանում որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5 000 դրամ.

3. Եղեգնավան համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3 000 դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3 000 դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3 000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

- Մինչև 1 հա.-ի համար՝ 1 000 դրամ,
- 1 հա.-ից 10 հա.-ի համար՝ 5 000 դրամ,

- 10 հա. և ավելի դեպքում՝ 10 000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5 000 դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 120 դրամ,

բ) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ.

գ) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.

դ) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ.

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1 000 դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3 000 դրամ,

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ 1 երեխայի համար՝ 5 000 դրամ.

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1 000 դրամ:

ԵՂԵԳՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ-Ի III ԵՌԱՄՍԿԱՅԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2020 թ-ի III եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը համաձայն թիվ 1 և 2 հավելվածների /կցվում է 2 էջ/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱՋԱՐՅԱՆ**

Հավելված 1

Եղեգնավան համայնքի ավագանու

04.11.2020 թ. թիվ 30-Ա որոշման

2020 թ. Երրորդ եռամսյակի բյուջեի եկամուտների կատարողականը աճողական տեսքով

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Ամսվա պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	Ամսվա կատարողականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ՀՈՂԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ	8962.00	6714.00	3171.70	47.24%
ՀՈՂԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ	64,80	45,00	2.98	6.62%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ	3100.00	2322.00	1787.81	76.99%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹ. ՖԻԶ ԱՆՁԱՆՑԻՑ	100.00	72.00	22.44	31.17%
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	208.00	153.00	211.40	138.17%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	95000,00	71244,00	29988,20	42.09%
ԸՆԹԱՑԻԿ ՆԵՐՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	31456.90	23586.60	24310.20	103.07%
ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՍԱՐԿՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	4000.00	2997.00	2521.26	84.13%
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	1700.00	1269.00	599.60	47,25%
ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	0.00	0.00	79,00	0.00 %
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ	4500.00	3375.00	3668.27	108.69%
ՀԱՄԱՅՆՔ ԵՆԹ ՄԱՆԿ ԳԱՆՁ ԾՆՈՂ ՎՃԱՐ	1000.00	625.00	0,00	0,00%
ԸՆԴԱՄԵՆԸ	150091,70	112402.60	66362.88	59.04%

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2

Եղեգնավան համայնքի ավագանու
04.11.2020 թ. Թիվ 30-Ա որոշման

2020թ. Երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականը աճողական տեսքով

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (հազ.դրամ)	Ամսվա պլանը (հազ.դրամ)	Փաստացի ծախսը (հազ.դրամ)	Ծախսը պլանի նկատմամբ
Աղբահանություն	1700.00	1260.00	1103.70	87.60%
Բարձրագույն կրթություն	200.00	200.00	00.00	0.00%
Գույքի նկատմամբ իրավունք	300.00	300.00	69,20	23.07%
Կառավարման մարմ պահպանում	20288,80	15191,60	12945.54	85.22%
Հանգիստ,մշակույթ,կրոն	6110,00	5210,00	3582.53	68.76%
Հասարակական կազմակերպություն	100.00	100.00	0.00	0,00%
Նախադպրոցական կրթություն	9403,00	9000,00	1823,00	20.26%
Ջրային կառույց շահագ. և պահպանում	4500.00	3750,00	3979.87	79,46%
Սոց.պաշտպան.անապահով ընտանիքներին	2000.00	1600.00	380,00	23.75%
Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ	6168,00	6168.00	00.00	00.00%
Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում	10480,00	10200,00	1699.99	16.67%
Ֆոնդային .բյուջեի պահուստային ֆոնդ	157.78	158,78	0.00	0.00%
Ասֆալտ –բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	101100,00	101100,00	36788.00	36.39%
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	1716.90	1516.90	593.00	39.09%
Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	55.00	55.00	00.00	0,00%
Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	1100.00	1100.00	0,00	0,00%
Բնական գազ և նավթամթերք	150.00	150.00	0,00	0,00%
Հանգստի և սպորտի գոտու պահպանում	100.00	100.00	0.00	0.00%
ԸՆԴԱՄԵՆԸ՝	165630,480	157160.280	61965.846	39.43 %

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Վարչական բյուջեի եկամտային մասը պակասեցնել 1000.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 54091.7 հազ.դրամ, համայնքի մանկապարտեզի ծառայությունների դիմաց ծնողական վճարների պլանը պակասեցնել 1000.0 հազ.դրամով, պայմանավորված՝ համավարակի պայմաններում մանկապարտեզի գործունեության դադարեցմամբ, ճշտված պլանը սահմանել 0,0 հազ.դրամ.

Կառավարման մարմնի պահպանում /բաժին-1, խումբ-1, դաս-1/ աշխատողների աշխատավարձեր՝ 4111 հոդվածը ավելացնել 360.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 13960.0 հազ.դրամ.

Հատկացումը կատարել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 1360.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 4808.0 հազ.դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱՋԱՐՅԱՆ**